ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

___ « _____ » 2024թ. N __ -Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 95-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի «Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու մասին» N 95-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1) Որոշման 1-ին կետի 12-րդ ենթակետից հետո լրացնել նոր 12.1-ին ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«12.1) «Մեկ ուղևորություն» ֆիզիկական կամ էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 3 օրվա ընթացքում 1 ուղևորություն կատարելու հնարավորությամբ՝ 100 դրամ.».

2) Որոշման 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձերը վճարած անձինք նույն ժամկետներում, նույն պայմաններով անհատույց օգտվում են տրոլեյբուսների և Երևան քաղաքի մետրոպոլիտենի ծառայություններից: Ուղևորության քանակական սահմանափակում ունեցող ֆիզիկական կամ էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ տրոլեյբուսների կամ Երևան քաղաքի մետրոպոլիտենի ծառայություններից անհատույց օգտվելու դեպքում՝ ուղևորության օգտագործման հնարավորությունը տրոլեյբուսների կամ Երևան քաղաքի մետրոպոլիտենի ծառայություններից անհատույց օգտվելու յուրաքանչյուր դեպքում՝ 1 օգտագործման հնարավորությամբ նվազեցվում է:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից: Սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով Որոշման 1-ին կետում լրացվող 12.1-ին ենթակետի դրույթները գործում են մինչև 2025 թվականի փետրվարի 1-ը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 95-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Երևան քաղաքի ավագանու կողմից 2024 թվականի մարտի 12-ին հաստատվել է «Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու մասին» N 95-Ն որոշումը:

Երևան քաղաքում ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման որակը բարձրացնելու նպատակով ձեռնարկվում են մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի իրականացվող բարեփոխումների շրջանակներում Երևան քաղաքը ձեռք է բերում հասարակական տրանսպորտի անհրաժեշտ շարժակազմ՝ գործող երթուղային ցանցում առկա իրավիճակը կարգավորելու և նոր երթուղային ցանցին անցում կատարելու համար: Նշված շարժակազմի ձեռք բերումը անհրաժեշտ է առկա հնամաշ տրանսպորտային միջոցների փոխարինման, արդյունավետ, անվտանգ և հարմարավետ ուղևորափոխադրում իրականացնելու համար: Երևան քաղաքում հասարակական տրանսպորտի փուլային ձևով իրականացվող բարեփոխումների շրջանակներում կարևորվում է ոչ միայն հասարակական տրանսպորտի փոխարինմանն ուղղված քայլերի ձեռնարկումը, այլ դրան զուգընթաց՝ հասարակական տրանսպորտի սպասարկմանն ուղղված բարեփոխումների ամբողջական ծրագրի իրականացումը, այն է՝ միասնական տոմսային համակարգի ներդրումը:

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշմամբ հաստատվել են Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձեր՝ միասնական տոմսային համակարգի ներդրմամբ:

Բնակչության կողմից տոմսային միասնական համակարգին անցումը կատարելու և համակարգի անցումը սահուն ապահովելու նպատակով՝ նախագծով նախատեսվում է փոխադրավարձի նոր սակագին՝ «Մեկ ուղևորություն» ֆիզիկական կամ էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 3 օրվա ընթացքում 1 ուղևորություն կատարելու հնարավորությամբ՝ 100 դրամ:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կարգավորումն ուղղված է տոմսային միասնական համակարգին անցումը կատարելու ապահովմանը՝ նախագծով նախատեսվում է, որ նույն կետի դրույթները գործելու են մինչև 2025 թվականի փետրվարի 1-ը:

Նախագծով նախատեսվում է նաև, որ ուղևորության քանակական սահմանափակում ունեցող ֆիզիկական կամ էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ տրոլեյբուսների կամ Երևան քաղաքի մետրոպոլիտենի ծառայություններից անհատույց օգտվելու դեպքում՝ ուղևորության օգտագործման հնարավորությունը տրոլեյբուսների կամ Երևան քաղաքի մետրոպոլիտենի ծառայություններից անհատույց օգտվելու յուրաքանչյուր դեպքում՝ 1 օգտագործման հնարավորությամբ նվազեցվում է՝ ինչը ուղղված է ուղևորության քանակական սահմանափակում ունեցող տոմսերի ձեռքբերման դեպքում անսահմանափակ քանակով ուղևորությունների կատարման բացառմանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ